19/3319

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 116 - 25

Նախաձեռնող՝ *«Արքարարտ» ՍՊԸ*
ք.Երևան, Ադոնցի 6, բնակարան 51

Գործունեությունը՝ *Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում բազալտե կոպճի արտադրամասի ջարդիչ տեսակավորող կայանի կառուցում*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 116 - 25

«07» մայիսի **2025թ.**

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում բազալտե կոպճի արտադրամասի ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնքի, Արամուս բնակավայր

Ներածական մաս. «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրում գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ տարածքում կառուցել նոր սարքավորումներով և տեխնոլոգիական բնութագրով բազալտե կոպճի արտադրամաս, որտեղ նախատեսվում է վերամշակել հանքավայրից արդյունահանվող բազալտի հումքը, ընդերքօգտագործման և արտադրական թափոններ, ինչպես նաև շինարարական թափոններ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 28062022-07-0082, ծածկագիրը՝ 07-013-0161-0110, Աբովյան համայնքի ղեկավարի կողմից 21.10.2024թ. ին № ՆԳ-1125-24 տրված նախագծման

թույլտվությունը: Հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման:

Նկարագրական մաս. նախատեսվող գործունեության նախաձեռնող է հանդիսանում «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ն, ով հանդիսանում է ընդերքօգտագործող և որի կողմից Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում ներկայումս իրականացնում է բազալտի արդյունահանում: Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնում է 6.78 հա մակերես: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի արդյունահանման՝ 30400 մ^3 է:

Ընկերությունը, որպես ընդերքօգտագործող նախատեսում է ջարդիչ տեսակավորող կայանում վերամշակել ներկայումս շահագործվող երկու հանքավայրերից արդյունահանվող բազալտի հումքը, արտադրական թափոնները և պայմանագրային հիմունքներով գնել այլ թափոններ և հումք, ներառյալ շինարարական թափոնները: Արտադրամասի առավելագույն տարեկան արտադրական ցուցանիշը 240000 մ^3 է:

Բացահանքի հյուսիս-արևմտյան ուղղությամբ տեղադրված է ջարդիչ կայան, որում ընկերության կողմից կատարվում հանքաքարի մանրացում:

Ընկերությունը նախատեսում է գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ տարածքում կառուցել նոր սարքավորումներով և տեխնոլոգիայով բազալտե կոպճի արտադրամաս, որտեղ նախատեսվում է վերամշակել հանքավայրից արդյունահանվող բազալտի հումքը, ընդերքօգտագործման և արտադրական թափոնները, ինչպես նաև նաև շինարարական թափոններ: Նոր արտադրամասը կապահովվի աշխատանքի բարձր արդյունավետություն և բնառեսուրսների խնայողություն:

Տարածքը հյուսիսից շրջափակված է խճային ճանապարհով, իսկ հարավից և արևմուտքից շահագործվող հանքավայրերով: Նախագծված շինությունը բաղկացած է քարե մամլիչից և օժանդակ շարժական էլեմենտներից:

Համաձայն նախագծային լուծումների նախատեսվում է իրականացնել քարի մանրացման արտադրասարքերի համար երկաթբետոնյա հիմնատակ 19.70x2.20 մ չափսերով, տեղադրել ջրի բաք, և ցանկապատ: Նախատեսվող բազալտի կոպճի արտադրամասը զբաղեցնում է 0.8 հա մակերես:

Տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

Y=8471047.979 X=4455538.264
Y=8470971.622 X=4455484.495
Y=8471035.562 X=4455410.152
Y=8471100.015 X=4455498.900

Կառուցապատման ցուցանիշներն են՝

- կառուցապատման մակերես 250 մ^2
- ընդհանուր կառուցապատման մակերես 600 մ^2
- բարեկարգման մակերես 400 մ^2:

250 մ^2 մակերեսում նախատեսվում է իրականացնել կառուցապատում, որի բետոնային աշխատանքների համար անհրաժեշտ 270 մ^3 ծավալով բետոնը կբերվի պատրաստի վիճակում: Հողային աշխատանքների ծավալը կկազմի 330 մ^3 հանվող զանգված, որից 50 մ^3-ը՝ որպես բերրի հողաշերտ կպահպանվի հատուկ միջոցառումներով, 80 մ^3-ը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ մնացորդային զանգվածը Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կիեռացվի համապատասխան աղբավայր:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
RA YEREVAN ENVIRONMENTAL EVALUATION CENTER
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Նախագծվող շինությունը բաղկացած է քարե մամլիչից և օժանդակ շարժական էլեմենտներից:

Աշխատանքային պրոցեսը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում (ըստ տարբեր չափերի): Արդյունահանված օգտակար հանածոն կամ վերամշակվող թափոնները բեռնատարներով տեղափոխվում է հումքի բաց պահեստ կամ խոշոր ջարդման ընդունիչ բունկեր: Պահեստից կամ բունկերից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման: Վերամշակվող հումքի ցածր խոնավության դեպքում փոխակրիչի սկզբնական մասում տալիս են 20լ/րոպե քանակությամբ ջուր, պահպանելով խոնավությունը 7-8% սահմաններում: Արտադրամասում բոլոր սարքավորումները բացօդյա են օժանդակ սարքավորումները՝ շարժական: Խճաքարի չափերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ:

Քարամաղման արդյունքում ստացած պատրաստի արտադրանքը /պատվեր եղած քանակությամբ/ կուտակվելու է արտադրական հրապարակում և տեղում վաճառվելու է սպառողներին:

Նախատեսվող գործունեության իրականացման համար ընկերությունը օգտագործելու է «ZENITH MINERAL» մակնիշի ջարդիչներ: Ջարդիչը մանրացնող համակողմանի (ունիվերսալ) մեխանիզմ է, որը կիրառվում է ցանկացած ամրության ապարներ մանրացնելու համար: Մանրացումը կատարվում է երկու այտավոր ջարդիչների միջոցով՝ խոշոր և միջին, եզակի դեպքերում առավել մանր մասնիկավոր նյութերի մանրացման համար: Ջարդիչ կայանի առանձնահատկություններից է նաև բարձր ամրության և հղկամաշունակության կավային նյութեր (ինչպես չոր, այնպես էլ խոնավ) մանրացնելու ունակությունը (սեղման ամրության սահմանը մինչև 2200 կգուժ/սմ^2):

ZENITH MINERAL այտավոր ջարդիչի հիմնական տարրերն են՝ շրջանակ, մանրացնող վահաններ, շարժվող այտ, գլխավոր առանցք, փոկանիվ, արտակենտրոնակային լիսեռ, կարգավորիչ սալիկ, փակող զսպանակ, պաշտպանիչ պահանգ:

Կայանքի առավելագույն արտադրողականությունը ըստ վերամշակվող հումքի կկազմի 240000մ^3: Տարեկան աշխատանքային օրերի առավելագույն թիվը կկազմի՝ 260 օր, մեկ 8-ժամյա հերթափոխով:

Հաշվի առնելով հանքաքարի տեսակարար զանգվածը՝ 2.66 տ/մ^3, տարեկան արտադրողականությունը կկազմի՝ 638400 տ/տարի: Օրական և ժամային առավելագույն արտադրողականության ցուցանիշները կկազմեն՝ 638400 տ/տարի: Տարեկան արտանետումները կկազմեն՝ 10.969 տ/տարի:

Քանի որ ջարդիչ կայանքը գործելու է հանքավայրի մերձակա տարածքում, հաշվարկներում ներառվել են նաև հանքավայրի արտանետման աղբյուրները:

Որպես արտանետման աղբյուր գույքագրվել են բացահանքը, լցակույտը և ջարդիչ կայանքը, որոնցից արտանետվում է թվով 6 տեսակի վնասակար նյութ՝

- Անօրգանական փոշի՝ 29,226 տ/տարի,
- Ածխածնի օքսիդ՝ 1,565 տ/տարի,
- Ածխաջրածիններ սահմանային՝ 0,361 տ/տարի,
- Ազոտի երկօքսիդ՝ 1,819 տ/տարի,
- Պինդ մասնիկներ /մուր/՝ 1,185 տ/տարի,

- Ծծմբային անհիդրիդ՝ 0,172 տ/տարի:

Հողամասում բնակելի տարածքների ուղղությամբ և բարեկարգվող հատվածներում նախատեսված է կանաչապատման աշխատանքներ արագ աճող բարդու տեսակներով, որի համար կօգտագործվի պահեստավորված հողաշերտը:

Արամուսի հանքավայրի տեղամասում ստորերկրյա ջրերը բացակայում, որը պայմանավորված է նաև հանքավայրը կազմող ապարների ճեղքավորվածությամբ և ջրաթափանցելիությամբ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Արամուսի բազալտների հանքավայրն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է 1-ին խմբին:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Հողային ռեսուրսների պահպանության համար ձեռնարկվելու են միջոցառումներ, որոնք կբացառեն բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում՝ դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտն հանվելու և պահեստավորվելու է առանձին՝ անջրթափանց թաղանթով, կատարվելու է խախտված հողերի վերականգում, շինարարական աշխատանքների ընթացքում: Բուսահողն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում, դրանց լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: Այն հատվածներում, որոնք

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոն կամ մանրախիճ, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր՝ փոխարինելով նորով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ . շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 4400 մ^3, որը քանդման արդյունքում և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբն է:

Ջարդիչ կայանում աշխատող երկու բեռնիչ և երկու ավտոինքնաթափի շահագործման արդյունքում փաստացի տարեկան կառաջանա է 0. 1 տ ժամկետանց բանեցված կապարե կուտակիչ և խոտան:

Այդ թափոնները պատկանում են վտանգավորության 2-րդ դասին, ծածկագիր՝ 92110100 13 01 2: Թափոնի կազմը՝ պլաստիկ (պոլիպրոպիլեն) իրան՝ 10%, կապարե թիթեղ-ներ՝ 70-75%, էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ 15-20%:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Ջարդիչ տեսակավորող կայանի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմանն ուղղված հիմնական միջոցառումները հետևյալն են՝

- ապահովել հանքաքարի խոնավացման համակարգի անխափան աշխատանքը,
- պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել ջարդիչի և փոխակրիչի շարժիչները,
- կազմել հանքաքարի ստացման և արտադրանքի առաքման ժամանակացույց, նվազեցնելու համար ճանապարհների բեռնվածությունը և բնակչությանը պատճառվող անհանգստությունը,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Տրանսպորտային միջոցների երթևեկության կազմակերպում միայն ցերեկային հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու համար,
- տրանսպորտային միջոցների երթևեկության համար ժամանակացույցի մշակում՝ երթևեկության ինտենսիվությունը չգերազանցելով 20 րոպեն մեկ երթ հաճախականությունը
- իրականացնել հումք տեղափոխող ճանապարհների ջրցան շոգ և քամոտ օրերին,
- արտադրական տարածքը պահել բարեկարգ և խնամված վիճակում,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների /շարժիչների/ պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը,
- տրանսպորտային միջոցների սպասարկում՝ մասնագիտացված կայաններում
- մշտապես հետևել խոնավացնող ջրի առկայությանը և ապահովմանը,
- պատվերների բացակայության ժամանակահատվածում կատարել կուտակված խճի ջրցան
- հողածածկի աղտոտումը կանխելու նպատակով՝ օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում մետաղի և այլ արտադրական թափոնները հավաքել և տրամադրել հատուկ լիցենզիա ունեցող վերամշակող կազմակերպություններին
- միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար՝ մոնիթորինգի միջոցառումների /փոշու աղմուկի, հողային ծածկույթի չափումներ/ իրականացման համար կմասնահատվի տարեկան 250.000 ՀՀ դրամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 540.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանում, անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Աբովյանի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
6. Չոր և տաք ամիսներին պարբերաբար իրականացնել ջրցան օրական 2-ից 3 անգամ՝ փոշու թույլատրելի նորմատիվային մակարդակն ապահովելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում բազալտե կոպճի արտադրամասի ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման և շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովակիմ Ֆրունզիկյան